«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2023

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ինչպե՞ս տեղայնացնել խաչվող հասկացությունները գրական երկերն ուսուցանելիս

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Բալասանյան

(Երևանի Լևոն Շանթի անվան թիվ4 հիմնական դպրոց)

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3

Գլուխ 1: Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ ----------5

Գլուխ 2: Խաչվող հասկացությունների տեղայնացումը գրական

երկերում ----------9

Եզրակացություն----------17

Օգտագործված գրականության ցանկ ----------19

Ներածություն

Ուսուցչի գործունեության առանցքը դասավանդումից, ուսումնադաստիարակչական աշխատանքները պատշաճ կատարելուց զատ սեփական աշխատանքի վերլուծությունն է, որը նրան հնարավորություն է տալիս տեսնելու ունեցած ձեռքբերումները, վեր հանելու բացթողումները, այսինքն՝ գնահատելու իր աշխատանքը: Հաջողությունները, անշուշտ, ոգևորում են և խթանում ուսուցչին՝ մղելով նրան առավել բեղմնավոր աշխատանքի: Նույնքան էլ մտահոգիչ են ձախողումները, չստացված դասերը, դեռևս չհաղթահարված կամ պարբերաբար առաջացող խնդիրները:

Գաղտնիք չէ, որ այսօր, միջին դպրոցից սկսած (գուցե տարրական դպրոցում էլ), մեծ խնդիր է սովորողին գրքին կապելը, ընթերցել տալը, գրական երկերի նկատմամբ սեր առաջացնելն ու դրանցով դաստիարակելը: Ինձ ՝ ուսուցչիս համար խոր մտահոգություն է սովորողների մի ստվար զանգվածի մոտ (նրանք կան բոլոր դասարաններում) գրականության նկատմամբ նվազող հետաքրքրությունը, երբեմն նաև անտարբերությունը: Նրանք <<որոշում են>>, որ դա իրենց պետք չէ, որ

ձանձրալի է վեպ, վիպակ կամ պատմվածք կարդալը, և ի վերջո դա անում են՝ պարտավորությունից ելնելով ու չքաղելով այն, ինչ որ մենք ենք ուզում: Այնինչ <<գրական ստեղծագործության ուսուցման հաջողության ամենակարևոր նախապայմանն ու գրավականը նրա ընթերցումն է. մինչև աշակերտը չկարդա,չի կարող դատողություններ անել, վերլուծել, խոսել տրված ստեղծագործության գեղարվեստական արժանիքների , բովանդակության մասին, չի կարող դաստիարակվել նրանում արտահայտված գաղափարներով>>:[1]

Գրականություն կարդալը չպետք է պատիժ լինի: Ընթերցանությունը պետք է հաճելի լինի: Դրա համար անհրաժեշտ է, որ այն գրավիչ լինի սովորողների համար և չդառնա սոսկ ուսումնական ծրագիր, որը պարտադիր է կատարել դպրոցում:

Առկա խնդիրը ուսուցչիս մղում է շարունակական պրպտումների ՝ գտնելու առավել արդյունավետ ու գործուն մեթոդներ և հնարներ գրականությունը խորապես սիրել

[1] Զ. Գրիգորյան, Մեթոդական ուղեցույց ,Երևան, << Լույս>>, 1990թ., էջ 57

տալու և ըստ էության ծառայեցնելու իր նպատակին՝ ինքնաճանաչում, աշխարհաճանաչում, կյանքի հմտություններ, արժեհամակարգ, դիրքորոշում:

Հանրակրթության պետական նոր չափորոշիչը , որ կարողունակահեն է, վերստին մեր առջև խնդիր է դնում վերանայելու դասավանդման մեր մոտեցումները և իրապես հասկանալու , որ դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա պիտի ծառայի այն գիտելիքների, հմտությունների, արժեքների ու վերաբերմունքի ձևավորմանը, որոնք սովորողներին կպատրաստեն ողջ կյանքում սովորելուն ու զարգանալուն: Ասել է թե սովորողին պատրաստել կյանքին որպես հասարակության կարողունակ քաղաքացի, որն ունի կայուն արժեհամակարգ: Այսպիսի քաղաքացիներն են, անշուշտ, ձևավորում գիտակից, պատասխանատու, հասարակություն:

Վերջնարդյունքները, որոնք սահմանված են չափորոշչով, ըստ էության ուղղված են կարողունակությունների ձևավորմանը: Գրականության առարկայական չափորոշչում ուսումնական գործունեության ձևերին զուգահեռ տրված են խաչվող (ընդհանրական) հասկացություններ, որոնցով համակողմանիորեն կարող է ուսումնասիրվել ուսումնական նյութը (մեր դեպքում՝ ցանկացած գրական երկ) և հասնել վերջնարդյունքներին, որոնք էլ վերջին հաշվով ձևավորում են կարողունակություններ: Խաչվող հասկացություններին ծանոթացել եմ վերջին 2 ուսումնական տարում (առավել հանգամանորեն ՝ պարտադիր վերապատրաստման շրջանակներում) և համոզված եմ, որ ճիշտ տեղայնացնելով խաչվող հասկացությունները գրականության կամ մայրենիի դասերին՝ կկարողանանք հետաքրքիր դարձնել տեքստերի ուսումնասիրությունն ու ընկալումը՝ ձևավորելով տեքտի հետ աշխատելու նոր մշակույթ, խթանելով ընթերցասիրութունը և սերը գրական երկերի նկատմամբ:

Համոզմունքիս հիմքում խաչվող հասկացությունների շուրջ աշխատանքների՝ դասերին ունեցածս որոշակի փորձն է և մեր առարկայի փորձագետ մասնագետների մեծ փորձը: Հենվելով այս երկու փորձառություններին՝ կներկայացնեմ խաչվող հասկացությունները գրականության դասերին տեղայնացնելու իմ կատարածը ու կատարելիքը :

Գլուխ 1. Խաչվող կամ ընդհանրական հասկացություններ

Ըստ ուսումնասիրողների՝ խաչվող հասկացությունները առանցքային հասկացություններ են ,որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողին ամբողջացնելու, փոխկապակցելու տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները :Դրանք ուշադրության պետք է արժանանան կրթական բոլոր աստիճաններում և բոլոր առարկաների դասերին: Խաչվող հասկացությունները պարզում են, թե ինչ գիտի սովորողը, ինչ է անում սովորողը, և ինչ է մտածում սովորողը: Վերջին գաղափարի շուրջ էլ ձևավորվել են հետևյալ խաչվող հասկացությունները՝

- Օրինաչափություն
- Պատճառ և հետևանք
- Կառուցվածք և գործառույթ
- Կայունություն և փոփոխություն
- Անհատներ և հարաբերություններ
- Ժամանակ և տարածություն
- Անհատական և մշակութային արժեհամակարգ
- Զարգացում
- Համակարգ և մոդել
- Էներգիա, նյութ
- Մասշտաբ,համամասնություն, քանակ

Հայոց լեզվի և գրականության առարկայական ծրագրերում վերջին 3-ը ներառված չեն:

Ներկայացնենք <<Գրականություն>> առարկային առնչվող խաչվող հասկացությունները: Ծանոթանանք ուսումնասիրողների բացատրություններին:

(Տես՝ հղումը)[2]

[2] https://youtu.be/ZIP6OLFngdY / 14.08.2023թ.

Օրինաչափություն

Օրինաչափությունները պարբերաբար հայտնվում են բնության և գիտության մեջ /օրինակ՝ տարվա եղանակները/: Օրինաչափություն նկատվում է բոլոր ոլորտներում, հանդիպում է ամենուր, կանոնավոր կառուցվածքներում, կրկնվող հարաբերություններում, լեզվական համակարգում, մշակույթի ոլորտում: Օրինաչափությունների ճանաչումը կարևոր է գիտական առաջադրանքներ կատարելու համար (դասակարգել, վերլուծել):

Պատճառ և հետևանք



Պատճառահետևանքային կապը երևույթների հիմքում ընկած պատճառների բացահայտումն է:Դրա ուսումնասիրության նպատակներից մեկն այն է, որ սովորողները հետևանքներն ուսումնասիրեն նույնիսկ այն դեպքերում, երբ դրանք դուրս են մարդու վերահսկողությունից: Ուսումնառության արդյունքում նրանք «ինչպե՞ս, ինչո՞ւ» հարցերից պետք է կարողանան անցնել «Ի՞նչն էր դրա պատճառը, ի՞նչ նախապայմաններ կային» հարցերի պատասխանները որոնելուն:

Կայունություն և փոփոխություն

Կայունությունը և փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Կայունությունը համակարգի, հասարակարգի, մշակույթի տվյալ երևույթի համեմատաբար անփոփոխ մնալն է: Կայունության և փոփոխության քննարկումների նպատակներից մեկը կարող է լինել, թե ինչու է երևույթը փոփոխվում, ինչպես: (օրինակ՝ ինչպես են փոխվում օրվա պահերը): Օրինակ՝ հայերենի լեզվական համակարգը կայուն է. լեզու սովորելիս մարդն օգտվում է այդ կայուն համակարգից, իսկ փոփոխությունները օգնում են մարդուն գործնականում կիրառելու այն:

Կառուցվածք և գործառույթ

Գործառույթը կարելի է բացատրել կառուցվածքով, իսկ կառուցվածքը՝ ըստ գործառույթի: Շատ հաճախ կառուցվածքով է պայմանավորված գործառույթը: Օրինակ՝ գրական երկի ուսումնասիրության ընթացքում կարևոր է բացահայտել, թե ինչպես է կառուցել հեղինակն իր երկը, մասերից յուրաքանչյուրն ինչ դեր ունի հեղինակի մտքերը, հույզերն ու զգացմունքները տեղ հասցնելու հարցում:

Անհատներ և հարաբերություններ

Այս հասկացությունը քննելիս սովորողը կընկալի, որ մարդկային հասարակությունը կազմված է անհատներից, որոնք պատմության մեջ կարևոր դերակատարություն են ունենում, հաճախ նաև ազդում են դրա զարգացման գործընթացի վրա: Անհատը մարդկային կյանքեր է փրկում,անարդարության դեմ է պայքարում: Այս առումով կարևոր է, որ սովորողը հասկանա, թե ով է ինքը, ինչ դեր ունի իր համայնքում, և ովքեր են մենք-ը, ինքը այդ ընդհանուրի մեջ ինչ անելիք ու գործառույթ ունի, ինչպես պիտի վերաբերվի ուրիշ մարդկանց:

Ժամանակ և տարածություն

Այս հասկացությունն ուսումնասիրելիս կարևորվում են որտե՞ղ և ե՞րբ հարցերը: Ժամանակն ու տարածությունը ամենուրեք են: Ժամանակի ընթացքում փոխվում են տարբեր տարածքներում ապրող ժողովուրդների կենցաղը, պատմությունը: Ժամանակները փոխվում են, մնայուն արժեքները՝ հավերժում: Ժամանակի և տարածության ըմբռնումը խիստ կարևոր է գրական երկերն ուսումնասիրելիս, քանի որ դրանցում մշտապես առկա է ժամանակի և տարածության հարաբերակցությունը:

Զարգացում

Ի՞նչ է փոփոխությունը, և ի՞նչ է զարգացումը: Շրջապատում ամեն ինչ անընդհատ փոփոխությունների է ենթարկվում: Մարդը ընդունում է այդ փոփոխությունները, ինչպես նաև օգուտ է

քաղում դրանցից՝ բարելավելով իր կյանքը, ապահովելով առաջընթաց և հասնելով զարգացման: Զարգացումը մարդուն հասցրել է նրան, որ աշխարհը կարող է ունենալ ափի մեջ:

Անհատական և մշակութային արժեհամակարգ

Մարդկության գոյության ընթացքում եղել են շրջադարձային կետեր, որոնք նոր որակներ են առաջ բերել և ձևավորել յուրօրինակ արժեհամակարգեր:Դրանք նոր գույներ են հաղորդել աշխարհին՝ հաստատելով, որ անհատականը բարձրանալով վերածվում է համամարդկայինի: Մարդիկ արարում ,ստեղծում են համագործակցելով, միասին աշխատելով: Նրանց համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվում են որոշակի արժեքներ, որոնք մարդկանց հարստացնում են նյութական և հոգևոր առումներով:

ԳԼՈՒԽ 2: Խաչվող հասկացությունների տեղայնացումը գրական երկերում

Ներկայացնենք տարբեր ստեղծագործություններից բերված հատվածներ, որոնք սովորողների հետ ուսումնասիիրել ենք այս կամ այն խաչվող հասկացության միջոցով՝ հասկանալու՝ որքանով կնպաստեն այդ հասկացությունները նոր դիտանկյունից նյութը ուսումնասիրելուն, կյանքի հետ կապելուն:

Լ. դա Վինչի, Որդիական երախտագիտություն ,(Մայրենի 6, էջ70)

Մի անգամ՝ առավոտյան, երկու ծերացած հոպոպներ՝վարուժան ու մարի, զգացին, որ արդեն ի վիճակի չեն բնից դուրս թռչել-հեռանալու: Փառակալած աչքերով այլևս անկարող էին տեսնել արևի լույսը, թեև երկինքն պարզ էր ,և սպասվում էր պայծառ եղանակ : Սակայն նրանք երկուսն էլ միայն խավար մշուշ էին տեսնում և իրենց շուրջը ոչինչ չէին տարբերակում: Թռչունները ծեր էին և անուժ: Նրանց թևերի և պոչի փետուրները փայլատվել և կոտրատվում էին: Ուժերը հատնելու վրա էին: Զառամյալ հոպոպները որոշեցին այլևս չհեռանալ բնից և միակամ սպասել իրենց վերջին ժամին;

Օրինաչափություն հասկացությունը վեր հանելու նպատակով հատվածի շուրջ առաջադրվեցին հետևյալ հարցերը՝

- Ի՞նչ ընդհանրություններ ունեն մարդիկ և հոպոպները:
- Ի՞նչ օրինաչափություն կարող եք գտնել այդ թռչունների մոտ:

Առաջին հարցի շուրջ աշակերտները նշեցին,որ բնության օրենքն ընդհանուր է բոլոր արարածերի համար. նրանք ծերանում են, թուլանում, տեսողությունն է նվազում, սպառվում են ուժերը, և հասնում են մահվան շեմին:

Երկրորդ հարցին տեքստի բառերով պատասխանեցին.աչքերը փառակալում են, թևերի ու պոչի փետուրները փայլը կորցնում են,կոտրատվում են, նաև հավատարիմ են միմյանց, որովհետև միակամ սպասում են իրենց մահվանը:

Այնուհետ պատմվածքի գործողությունների զարգացմանը հետևելով՝ տեսան այլ օրինաչափություններ ևս՝ կապված երախտագետ ձագերի՝ իրենց ծնողներին խնամելու, բուժելու և նորից կյանքի կոչելու որդիական պարտականության հետ:

Իհարկե, ցավով նշեցին ,որ մարդկանց աշխարհում օրինաչափ դառնալու միտում

ունի ծեր ծնողներին այլոց կամ պետության խնամքին հանձնելը:

Պատճառ և հետևանք հասկացությանն անդրադարձանք **Նար-Դոսի <<Ես և նա>>** պատմվածքն անցնելիս (Գրականություն 8 ,էջ 133):

Թուղթը վերցրեց և կարդաց.

«Հայրս ասաց, որ իմ և քո միջև անանց անդունդ կա: Մենք վերևն ենք, դու ներքևը, էլ մի' գա: Մոռացի'ր ինձ»:

Կարդաց, առժամանակ շանթահար մնաց տեղնուտեղը արձանացած, հետո ցնցվեց ուժգնորեն, մի կայծակնացայտ հայացք նետեց դեպի ազնվական ապարանքի բարձունքը, թուղթը, ցասումով լի, ուզեց պատառ-պատառ անել, բայց զսպեց իրեն, խնամքով ծալեց, ծոցը դրեց, ոտով դեն շպրտեց գետնին ընկած դրամը և, ջութակը պինդ սեղմելով վիրավոր կրծքին, հեռացավ՝ անարգանքի կսկիծը հպարտ սրտի մեջ պարուրած:

Աշակերտներին առաջադրվեց լրացնել m -աձև աղյուսակը:

Ինչպե՞ս կատարվեց դեպքը:	**Ինչու՞ տեղի ունեցավ:**	**Ի՞նչ պայմաններ կային դրա համար:**
Աղջիկը լուսամուտից նետեց դրամ և մի երկտող,որի մեջ գրվածը ցնցեց ու խորը վիրավորեց պատանուն:	Հայրն ասել էր,որ իրենց մեջ մեծ անդունդ կա. իրենք վերևում են, տղան՝ ներքևում:	Աղջիկը հարուստ էր, պատանին՝ աղքատ ու որբ: Աղջիկը ենթարկվել էր հոր կամքին, թեև սիրում էր Անտոնիոյին:

Աղյուսակով աշխատեցին նաև նյութի այլ հատվածներ քննարկելիս, և կարևոր է, որ աշակերտները հասկացան , որ պատճառները ծնում են լավ կամ վատ հետևանքներ, և անհրաժեշտ է հետևություններ անել և' իրենց, և' այլոց կյանքից:

Ուսումնառության արդյունքում նրանք «Ինչպե՞ս դա տեղի ունեցավ», «Ինչո՞ւ դա տեղի ունեցավ» հարցերից պետք է կարողանան անցնել «Ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա», «Ի՞նչ պայմաններ էին դրա համար անհրաժեշտ» հարցերին:

Նույն ստեղծագործության մեկ այլ հատված քննարկեցինք **զարգացում** հասկացության տեսանկյունից:

Եվ ահա, վերջապես, դուրս եկավ նա բեմ: Ու ամբողջ դահլիճը գրեթե միաբերան հառաչեց: Մի՞թե սա այն Անտոնիոն չէ, որին ճանաչում էր ամեն մի վենեցիացի, այն պատանի ջութակահարը, որ միջնադարյան տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք, փողոցից փողոց, պատուհանների տակ նվագում էր սերենադներ: Այո՛, այո՛, նա է, ինքը, որովհետև— ահա՛ նույն հնչյունները, բայց այս անգամ արդեն առնականորեն հասուն, ինքնավստահ, ինքնամփոփ, երբեմն վերասլաց, երբեմն մարտակոչի խիզախ ավյունով լեցուն: երբեմն մարտակոչի խիզախ ավյունով լեցուն:

Ու որքան այդ հնչյունները դյութիչ էին, այնքան գեղեցիկ ու հմայիչ էր ինքը՝ Անտոնիո Բոնվինին, բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը, վառված դեմքը, հանճարեղ ճակատը, ականջների մոտ ցրված երկար փայլուն մազերը, բոլորը, բոլորը մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում նրա ջութակի մոգական հնչյունների հետ: /էջ134/

Առաջադրվեց Տ-աձև աղյուսակով ցույց տալ կերպարի կրած փոփոխությունը. Ինչպիսի՞ն էր Անտոնիոն պատմվածքի սկզբում, ինչպիսի՞ն՝ վերջում:

Պատանի Անտոնիոն	**Հայտնի ջութակահար Անտոնիո Բոնվինին**
Լուրջ, խոհուն ու թախծալի աչքերով որբ տղա՝գրավիչ դեմքով ,բայց գունատ ու տխուր: Տրուբադուրի նման շրջում էր քաղաքից քաղաք,փողոցից փողոց, պատուհանների տակ նվագում էր սերենադներ:	**Բարեկազմ հասակով, հրացայտ աչքերով, հանճարեղ, առնականորեն հասուն, ինքնավստահ, ինքնամփոփ, երբեմն վերասլաց,երբեմն մարտակոչի խիզախ ավյունով լեցուն:**

Հետևում է հարցը՝

- Կարո՞ղ ենք ասել,որ կերպարը զարգացում է ապրել: Ինչպե՞ս կհիմնավորեք: Աշակերտները պիտի հասկանան,որ ամեն փոփոխություն զարգացում չէ: Զարգացումը այն փոփոխությունն է, որի արդյունքում առաջանում է առաջադիմական վիճակ:

Կառուցվածք և գործառույթ հասկացության էությունն այն է,որ գործառույթը կառուցվածքից է բխում: Շատ գործառույթներ հենց կառուցվածքով են պայմանավոր

Նույն <<Ես և նա>> պատմվածքը հետաքրքիր **կառուցվածք** ունի՝ **նախադրություն,**որում հեղինակը ներկայացնում է,թե ինչու է պատմվածքի մասերը վերնագրել **<<Ես>>** և **<<Նա>>:** Այդ կառուցվածքով էլ պայմանավորված է գործողությունների զարգացման տրամաբանությունը : Աշակերտներին ծանոթ է նաև պոեմներից շատերի՝ **նախերգանք**, **բուն նյութ**, **վերջերգ** կառուցվածքը և յուրաքանչյուր մասի դերը /գործառույթը/:

6-րդ դասարանում այս հասկացությունը յուրօրինակ մեկնաբանություն ստացավ **Գ.Էմինի <<Պատգամ>> բանստեղծության** (Մայրենի 6,էջ 90) հետևյալ հատվածում.

Նե՛ղ են ճամփեքը լեռնական,

Երկու հոգու տեղ չե՛ն անում,

Թե դեմ դիմաց ելնեն հանկարծ.

Թե բարեկամ ես ու ընկեր,

Ա՛նց կկենաք իրար գրկած,

Թե դավո՛վ ես այստեղ ընկել,

Կգլորվես ժայռերից ցած…

Ըստ աշակերտների՝ Հայաստանի լեռնոտ երկիր լինելով է պայմանվորված նեղ ճանապարհների առկայությունը: Իսկ նեղ ճամփեքով անցնելու համար անցորդները, իրար գրկած, պիտի անցնեն: Ուրեմն ընկեր ու բարեկամ պիտի լինեն, որ իրար գրկած՝ երկուսով կարողանան անցնել,իսկ թշնամիները պիտի գլորվեն ժայռերից ցած: <<Ճամփեքն>> իրենց բնական կառուցվածքով անցորդներին մտածել են տալիս իրենց գործառույթի մասին:

Նորից նույն ստեղծագործության մեջ տեղայնացրինք շատ կարևոր հասկացություններից մեկը՝ **անհատ և հարաբերություններ:**

Զգո՛ւյշ գործիր Հայաստանում, -

Մենք գահ ու թագ չե՛նք ունեցել,

Եվ... արքա է ամեն մի հայ.

Զորք ու բանակ չե՞նք ունեցել,

Եվ... սպա՛ է ամեն մի հայ.

Ամեն մի հայ՝ լեռան մի ծերպ,

Ամեն մի հայ՝ ուրույն մի կերպ,

Ամեն մի հայ՝ մի Հայաստան-

Բաժա՛ն-բաժա՛ն,

Անմիաբա՛ն,

Զատվա՛ծ, հատվա՛ծ,

Եվ սակայն՝ մի՛,

Երբ սպառնում է թշնամին...

Պարզելու համար, թե ինչպիսին է հայը՝ որպես առանձին անհատ, և ինչ ներդրում ունի ընդհանուր գործում, առաջադրվեց լրացնել անավարտ նախադասությունները՝ բխեցնելով տեքստից.

:Հայը նա է, ով……

Ամեն առանձին հայ դառնում է **մենք**, երբ……

Հասկանում են, որ յուրաքանչյուր մարդ ,որ բնութագրվում է միայն իրեն բնորոշ հատկանիշներով, ընդհանուրի, հասարակության մեջ իր դերն ունի, և պետք է գիտակցել այդ դերի կարևորությունը:

Հաջորդ քայլը կլինի պատմական անհատների ճանաչումը, անհատներ, որոնք պատմության մեջ կարևոր դեր են խաղում և իրենցով պայմանավորում շրջադարձեր /Հայկ Նահապետ,Արտաշես Ա թագավոր/: Նշանավոր մարդկանց գործունեության ուսումնասիրությամբ սովորողը կարող է հասկանալ իրեն ու այլ մարդկանց, արժևորել իր և այլոց զգացումները, ապրումները, տեսակետները:

Կայունություն և փոփոխությունը փորձեցինք դիտարկել **Հովհ.Շիրազի <<Էքսպրոմտ>>** բանաստեղծության մեջ : (Գրականություն 7,էջ113)

Մենք խաղաղ էինք մեր լեռների պես, Դուք հողմերի պես ոռնացիք վայրագ:

Դուք հողմերի պես խուժեցիք վայրագ: Բայց մենք հավերժ ենք մեր լեռների պես,

Մենք ձեր դեմ ելանք մեր լեռների պես, Դուք հողմերի պես կկորչիք վայրագ:

Ակնհայտորեն տեսան կայունն ու հավերժողը՝ լեռները, և անցողիկը՝ փոփոխություն առաջացնող հողմերը: Առաջադրվեց համեմատել անցած որևէ գործի հետ: Բերեցին հետևյալ հատվածը.

Հողմեր են եկել, հողմեր են անցել Շատ խոյակ ու սյուն փոշի են դարձել,

Ու այս որմերն են ծեծել դարեդար, Բայց մնացել է արծիվն անվթար:

Որպես կայունության խորհրդանիշներ նշեցին նաև Արարատ լեռը, մեր դարավոր քարեղեն կոթողները, Արաքս գետը, մեր լեզուն, որ, փոփոխություններ կրելով, ապրում և կատարելանում է:

Ժամանակ և տարածություն հասկացությունը կապում ենք **որտե՞ղ** և **ե՞րբ** հարցերի հետ: Տիպական է **Դ.Դեմիրճյանի <<Ավելորդը>> պատմվածքի** հատվածը: (Գրականություն 7,էջ 39-40)

Քաղաքը տեղից վեր կացել գնում էր: Ֆուրգոններ, սահնակներ, ու նրանց կողքից հետևակ մեծ ու փոքր շարաններ շփոթված, աղմկելով գնում էին…

Սուր վտանգն ու աղմկալից սարսափն անցել էին՝ տեղի տալով մի խաղաղ թշվառության, որ ընդունեց փախստականներին հետևյալ գավառական քաղաքում: Հանկարծակի աղքատներ, մի ժամում անտունացած մեծատուններ, ի ծնե չքավորներին խառնված, եկան ապաստանելու ամեն կարոտություն չկռահող, ամեն ինքնասիրություն չհաշվող բարեգործության և նրա միշտ ուշացող օգնության:

Անցյալ դարասկզբի դեպքերն են (պատմվածքը գրվել է1917թ.-ին), մեր պատմական հայրենիքում են կատարվում գործողությունները: Որքան էլ ժամանակն ու տարածությունը անցյալ են դարձել,աշակերտներն այն արդիականացրին՝ կապելով 44-օրյա պատերազմի հետ: Թշնամին նույն թուրքն է. պատմությունն էլ կրկնվելու

սովորություն ունի. դասեր է պետք քաղել: Իսկ առհասարակ, երբ խոսվում է հայրենիքի, խաղաղության, ազատ ապրելու իրավունքի և նմանօրինակ այ արժեքների մասին, հարկ է նշել, որ այս արժեքները չեն կաշկանդվում ժամանակի ու տարածության սահմաններով:

Մեծ աշխարհին մեր արվեստը, մշակույթը ներկայացրել են տարբեր բնագավառների հզոր **անհատներ** ՝ համաշխարհային **մշակութային արժեքները** համալրելով իրենց ստեղծած արժեքներով:

Աշակերտները պետք է հասկանան, որ ստեղծարարության հիմքում ընկած են գիտելիքները, հմտությունները, տքնաջան աշխատանքը, նորը արարելու մղումը, մարդկանց հետ համագործակցելու կարողություններ, բազում այլ հատկանիշներ, իհարկե, նաև բնատուր օժտվածությունն ու շնորհը:

Ահավասիկ **Մ. Գալշոյանի <<Կռունկ >> պատմվածքը** մեծն Կոմիտասի աշխարհահռչակ երգի մասին: (Մայրենի 6,էջ171)

Կոմիտասը նստեց դաշնամուրի մոտ ու նայեց Մարգարիտին: Նա տխուր ժպտում էր:

-Կռո՛ւնկ,- հոգուց փերթ-փերթ պոկված մեն մի բառի հետ շունչը գնաց, տարածվեց այդ պանդոկից, Սպիտակ կղզուց դուրս, ինչ-որ տեղ փռվեց մի հորիզոն, շունչը խորացավ, և այդ պանդոկից ու Սպիտակ կղզուց դուրս բերված աշխարհն ու օրը մթնոլորտ ունեցան ու գույն: Հոգուց փերթ-փերթ անջատվող բառի հետ շունչն ալիք-ալիք ծավալվեց.

....ուստի՞ կուգաս, ծառա եմ ձայնիդ,

Կռո՛ւնկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս. . .

Իռլանդուհին կամաց թեքվեց դեպի Մարգարիտը.

— Կարոտի՞ մասին է:

— Այո՛, պանդուխտի երգ է:

Հոսում էր Կոմիտասի ձայնը ու ձայնի հետ՝ լուծված բառերը: Իռլանդուհու համար բառ ու խոսք չկար, կար միայն հայր սուրբից անջատվող անհատնում շունչ...Իռլանդուհին փղձկաց, նա դեմքին առավ ափերի մեջ և գլուխը դրեց սեղանին:

«Դա ի՛նչ երաժշտություն էր, ի՛նչ ձայն էր... ,ես երբեք չպիտի մոռանամ... չպիտի մոռանամ. . . », - կրկնում էր մտքում:

Աշակերտներին հանձնարարվեց փոքրիկ շարադրանքով հանդես գալ այն հարցի շուրջ, թե ինչու էր հուզվել իռլանդուհին, երբ չէր հասկանում <<Կռունկ>>-ի բառերը: Իսկ կարևո՞ր է մշակույթը անհատի կյանքում:

Պատասխանների մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ արվեստը,այս դեպքում՝ երգը, հոգով են ընկալում,և բառերը հասկանալն էական չէ. իրենք էլ բազում օտար երգերից հուզվում են՝ առանց բառերը հասկանալու:

Այն պայմանավորեցին արվեստագետի տաղանդով: Անհատի կյանքում խիստ կարևորեցին մշակույթի դերը, ու փաստեցին,որ նոր սերունդը,ցավոք, ավելի տարված է օտար մշակույթով: Այսօր, ավելի քան երբևէ, անհրաժեշտ է ճանաչել համաշխարհային մշակութային արժեքները՝ բարձր պահելով,իհարկե, սեփականը:

Աշակերտներից մեկը հիշեց արտադասարանական ընթերցանության նյութերից <<Սասունցիների պարը>> պոեմի հրաշալի հատվածը՝ կապելով այս հասկացության հետ:

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հիացա՛վ,

Պարե՛ց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացա՛վ,

Որ պա՛ր չէ սա, այլ՝ մի երկրի հի՛ն պատմություն,

Ուր պարտությո՛ւնն անգամ ունի հպարտություն:

Եվ չի՛ հաղթի ոչինչ այն քա՛ջ ժողովրդին,

Որ այս ջանքո՛վ

Ու այս կամքո՛վ

Պարե՛լ գիտի...

Կարծում եմ՝ աշակերտներին այսպես փոքր առ փոքր կարող ենք սովորեցնել խաչվող հասկացությունների միջոցով տեքստի ուսումնասիրության քայլերը՝ ի վերջո ձևավորելով մշակույթ:

Հետադարձ կապի արդյունքում պարզեցինք, որ աշակերտները ուսումնառության նոր մոտեցումների կարիք ունեն, իրենց հետաքրքիր են այսօրինակ աշխատանքները, նոսրանում են անտարբեր, <<ոչինչ չկարողացող>> աշակերտների շարքերը, իսկ ամենակարևորը իրենց հավաստմամբ այն է, որ այլ առարկաների դասանյութերի մեջ փորձում են գտնել այս հասկացությունները:

Եզրակացություն

Աշխատանքի ներածական մասում ադրադարձանք խնդրին, որի լուծման, հաղթահարման ուղիները քննարկեցինք հետազոտական աշխատանքի բովանդակային մասում: Մեջբերում եմ խնդրի ձևակերպումը. << Գաղտնիք չէ, որ այսօր, միջին դպրոցից սկսած (գուցե տարրական դպրոցում էլ), մեծ խնդիր է սովորողին գրքին կապելը, ընթերցել տալը, գրական երկերի նկատմամբ սեր առաջացնելն ու դրանցով դաստիարակելը: Ինձ ՝ ուսուցչիս համար խոր մտահոգություն է սովորողների մի ստվար զանգվածի մոտ (նրանք կան բոլոր դասարաններում) գրականության նկատմամբ նվազող հետաքրքրությունը, երբեմն նաև անտարբերությունը: Նրանք <<որոշում են>>, որ դա իրենց պետք չէ, որ ձանձրալի է վեպ, վիպակ կամ պատմվածք կարդալը, և ի վերջո դա անում են՝ պարտավորությունից ելնելով ու չքաղելով այն, ինչ որ մենք ենք ուզում>>:

Ապա հենվելով մեր իսկ փորձարկած արդյունքների վրա՝ համոզվեցինք, որ՝

- ճիշտ տեղայնացնելով խաչվող հասկացությունները գրականության և մայրենիի դասերին՝ կկարողանանք հետաքրքիր դարձնել գրական երկերի ուսումնասիրությունն ու ընկալումը՝ ձևավորելով տեքստերի հետ աշխատելու նոր մշակույթ, խթանելով ընթերցասիրությունը և սերը գրական գործերի նկատմամբ:

Բավականաչափ պրպտումների արդյունքում ծանոթանալով նաև մասնագետների առավել հաջողված փորձառություններին՝ եկանք նաև հետևյալ կարևոր եզրահանգումներին՝

- խաչվող հասկացությունները ճիշտ տեղայնացնելու համար ուսուցիչը պետք է ունենա մեթոդական մեծ զինանոց,
- խաչվող հասկացությունների միջոցով ստեղծագործությունը քննելիս հնարավորություն է ընձեռվում նյութը ուսումնասիրել նոր ձևաչափով, համակողմանիորեն՝ կապեր գտնելով իրական կյանքի հետ,
- խաչվող հասկացությունները տեքստի մեջ խորանալու, բազմաբնույթ աշխատանքներ կատարելու հնարավորություններ են տալիս, որի արդյունքում սովորողները երևույթները դիտարկում են նաև միջառարկայական կապերի շրջանակում և տեսնում դրանք ամբողջության մեջ,

- ընդհանրական հասկացությունները, ի վերջո, նպաստում են վերջնարդյունքների ապահովմանը և կարողունակությունների ձևավորմանը.

Խաչվող հասկացություն	**Վերջնարդյունք**
Օրինաչափություն	Վերլուծական մտածողության զարգացում
Կառուցվածք և գործառույթ	Գիտելիքի կիրառում անծանոթ երևույթը բացատրելու համար
Պատճառ և հետևանք	Քննադատական մտածողության զարգացում
Կայունություն և փոփոխություն	Հետադարձ կապի ապահովման կարողություն
Անհատներ և հարաբերություններ	Համագործակցելու, հոգատար վերաբերմունքի, ապրումակցման, ճիշտ հաղորդակցվելու կարողությունների ձևավորում և զարգացում
Ժամանակ և տարածություն	Ժամանակի և տարածության ըմբռնում
Զարգացում	Առաջադիմական վիճակ ստեղծելու կարողություն
Անհատական և մշակութային արժեհամակարգ	Ստեղծարարության դերի

	ու նպատակի գիտակցում, մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների արժևորում, արվեստի կարևոր առաքելության գիտակցում

Նախատեսում եմ ուսումնական ծրագրի որևէ ծավալուն ստեղծագործություն (հաշվի առնելով ծավալուն երկերի ուսուցման դժվարությունը) սովորողների հետ քննել խաչվող հասկացությունների ամբողջ ծավալով ու վերլուծել ուսուցչի և աշակերտների դիտանկյունից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, հաստատված է 2021թ. փետրվարին:

2 .Մայրենիի և գրականության չափորոշիչ և ծրագրեր

3 .https://youtu.be/ZIP6OLFngdY / 14.08.2023թ.

4. Խաչվող հասկացություններ, ԿԶՆԱԿ, Երևան, 2022թ.

Կազմողներ՝ Մարինե Մանուկյան, Գայանե Թադեւոսյան, Ռուզաննա Ստեփանյան, Կարինե Ավետիսյան, Լյուդմիլա Առուշանյան, Գայանե Մկրտչյան, Հասմիկ Մարգարյան, Կարինե Թամիրօղլյան, Արտակ Մանուչարյան, Կարինե Հարությունյան, Լիլիթ Մկրտչյան, Մարիամ Պետրոսյան

5. Զ. Գրիգորյան , Մեթոդական ուղեցույց ,Երևան, << Լույս>>, 1990թ.

19